


ՀԱՅՍՏԵՏԱՔՍՏՐԵՍՏ

Գ. ԽԱԼԱԹՅԱՆ

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ



ՅԵՐԵՎԱՆ

1940

634.1 *sup.*
Խ-17

ՀԱՅՍՏԵՏԱՔՍՐԵՍ

24 SEP 200

Գ. ԽԱԼԱԹՅԱՆ

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ

(Համաժողովրդական Գյուղատնտեսական
Ֆուգահանդեսի նյութերից)

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

06 MAY 2013

3602
40

ՆԱԽԱԲԱՆ

«Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը, վորի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում էր հարվածային կոլտոգների 1935 թվի Համամիութենական 2-րդ Համագումարին — այդ ամենից առաջ կոլտոգների ցուցահանդեսն է, կոլտոգների հաղթանակների ցուցահանդես, վորոնց մեջ մենք տեսնում ենք բանվորների և գյուղացիների միության հաղթանակող ուժը կոմունիզմի դրոշմի տակ, ԼՆՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ Մեծ կուսակցության դրոշի տակ:

«Հայտնի է հազարավոր և միլիոնավոր գյուղացի մարդիկ այս տարիների ընթացքում դարձան հասարակական խոշոր տնտեսության փորձված կազմակերպիչներ կոլտոգներում, կոլտոգային ողակներում և բրիգադաներում: Այս մարդիկ ուժգին բափով տիրապետում են գյուղատնտեսական առաջավոր կուլտուրային գյուղատնտեսական գիտությանը»: այդպես է ասել ընկեր ՄՈԼՈՏՈՎԸ 1939 թվի ոգոստոսի 1-ին Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսի բացման առթիվ իր արտասանած ճառում:

Ահա այդպիսի հաղթանակող կոլտոգների ու առաջավոր գյուղատնտեսական կուլտուրային ու գյուղատնտեսական գիտությանը տիրապետող մարդկանց մասին է խոսում սույն բրոշյուրը, վորտեղ հանդես են գալիս բրազուրծության գծով աշխատող առաջավոր մարդիկ:

Հրապարակելով այս աշխատությունը նպատակ ենք դրել ցույց տալու, թե Սոցիալիզմ կառուցող մարդիկ, սոցիալիզմի և սոսիալիզմի մեթոդներով աշխատելով Սոցիալիզմի յերկրում ինչքան մեծ հնարավորություններ ունեն ինքնուրույն կերպով ստեղծելու նոր ագրոտեխնիկա՝ արտադրությունը բարձրացնելու համար, թե կոլտոգներն իր ինիցիատիվայով ինչպես է մշակում Սոցիալիստական դաշտերը, վորին մեծապես ձգնում են ԼՆՆԻՆՅԱՆ-ՍՏԱԼԻՆՅԱՆ Կուսակցությունն ու Խորհրդային Իշխանությունը: Թե ինչպես գյուղատնտեսական պրակտիկ աշխատողները հետա-

քրքրվելով գիտությամբ, գիտական աշխատողների հետ միասին
ձեռնարկ անելով իրենց համար Սոցիալիստական
յերկրի դաշտերի արտադրողականության բարձրացման:

Բացի դրանից, պրակտիկ աշխատողները սոց-մրցման հիման
վրա, ձգտում են յերեկվան հանել իրենց գիտությունը, դրանով
խել ռժանդակելով գիտությանը, լրացնում են նրա պակասները:

Այնպիսի մարդիկ, ինչպիսին է Բարմինը, վարը մշակել է հա-
տուկ ագրոտեխնիկա Միության ամենահյուսիսային շրջանների
համար, մեծապես կարող են ռժանդակել Հայկական ԽՍՀ-ի
շրջանների՝ Ախտայի, Դուզեմի, Մարտունու, Բասարգեչարի,
Դիլիջանի, Ադիսի, Ստեփանավանի և Կիրավականի շրջաններում
աշխատող ապագա քաղաքներին, վարում ուշի-ուշով հետևելով
Բարմինի դրեմակին, Միչուրինի աշխատանքների սկզբունքներով
կարող են էլ ավելի կատարելագործել քաղաքների ագրոտեխ-
նիկան մեր այդ նոր շրջանների պայմաններում:

Քաղաքների առաջ դրված է խոշոր պատվավոր պարտա-
կանություն: Յեթե 1938 թվին Միության շերամապահությամբ
գրավող հանրապետություններում հաշվի յեն առկված 62 միլիոն
թեմու ծառեր և 16 հազար հեկտար քիմական քառասուն, ապա
Ստալինյան 3-րդ հնգամյակում նախատեսված է թեմու ծառե-
րի քանակը հասցնել 158 միլիոնի և քիմական քառասունների տարա-
ծությունը 120 հազար հեկտարի:

Այս պատվավոր պարտականությունը հաջող կատարելու հա-
մար անհրաժեշտ է էլ ավելի ուսումնասիրել քաղաքների ագ-
րոտեխնիկան և աշխատել ստախանովյան մեթոդով, լայն ծավա-
լելով Սոցիալիստական մրցությունը:

Հրապարակելով այս աշխատությունը մենք հույս ունեն-
վումք յուրաքանչյուր կոլտոգնիկ ու սովխոզում աշխատող, ուշադիր
կերպով կարդալով այն, ինքն էլ կստեղծագործի իր աշխատանքի
քննադատում ու ավելի կարգաբարձր, քե իր և քե կոլտոգի ու սով-
խոգի արտադրողականությունը, դրանով զարկ տալով Սոցիալիստա-
կան շինարարության էլ ավելի ամրապնդման ու բարգավաճմանը:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

ԹԵՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ

Վ. Վ. ՖԱՅՈՒԿ

Վ. Վ. Ֆայուկը Ֆերգանայի թիթենու տնկարանի վարիչն է:

Իր կյանքի 54 տարիներից 23-ը նվիրել է գյուղատնտե-
սությանը: Վերջին 10 տարիներն անընդհատ աշխատում է Ուզ-
բեկստանի թիթենու տնկարանում:

Նրա անունը հայտնի յե դառնում դեռևս Ուզբեկմետաք-
տրեստի Զար-Կուրգանի թիթենու տնկարանում աշխատելիս:
Նա հայտնի յե իբրև լավ կազմակերպիչ-տնտեսավար: Ֆայուկի
դեկավարությունը 1935 թվին ցանքի բաժանմունքի յուրաքան-
չյուր մեկ հեկտարից ստացվում է 602 հազար բուսակ, վորից
ստանդարտ 481 հազար: 1937 թվին արտադրանքն ավելի յե
բարձրանում—մեկ հեկտարից ստացվում է 838 հազար, վորից
ստանդարտ բուսակներ-692 հազար: Նա կանգ չի առնում այդ
հաջողությունների վրա: 1938 թվին մեկ հեկտարից արդեն տա-
լիս է 871 հազար բուսակ, վորից 712,5 հազար ստանդարտ: Սա-
կայն նրա լավագույն աշխատանքը միայն դրանով չի սահմա-
նափակվում:

Նա թիթենու ծառերի տերևի բերքատվությունը բարձրաց-
նում է ցածր բերքատու տեղական խառակ սորտը փոխարինելով
կուլտուրական բերքատու սորտով:

Շքանշանակիր գյուղատնտես Վ. Բակուլինի ոգնությունը
1933 թվին նա խառակ սորտը պատվաստում է բարձր բերքա-
տու սորտով: 1935 թվինայդ սորտը փոշոտում է Կոկու-
սո 70 սորտի փոշոյով և ստացած հերթիդ թիթենին տարածում է
կոլտոգներում: Այդ հերթիդ Ֆերգանայի դաշտի շերամապահ-
ների համար հանդիսանում է թանգարտեք սորտ, վորովհետև
նա տեղական խասակ սորտի նման լավ է համակերպվում Ֆեր-
գանայի կլիմայական պայմաններին, իսկ Կոկուսո 70 սորտի

նման տալիս և խոշոր տերևներ և ունի բարձր բերքատվութիւն:

Վերջին 3 տարին տնկարանն աճեցրել է 1,5 միլիոն հիբրիդ բուսակներ, 1939 թվին հիբրիդ սերմերով ցանել է 6 հեկտար, վորից ստանալու յե 4,800 հազար ստանդարտ բուսակ:

Վ. Վ. Ֆայուկը միաժամանակ ռացիոնալիզատոր է: Բեթմենով բուսակներ քանդելը թանկ է նստում տնկարանի վրա Անհրաժեշտ է եժանացնել այդ աշխատանքը: Յեւ ահա նա բուսակները քանդում է Սակկի ձիու գութանով, հանում է Սակկի գութանի խոփը և դրան փոխարինում է հատուկ դանակով: Այս ձևով մեկ հեկտար բուսակների քանդելը 475 ռուբլիով եժան է նստում:

Ինչպես բոլոր ստախանովականները, այնպես էլ Վ. Վ. Ֆայուկը տնկարանում կիրառում է բարձր ագրոտեխնիկա: 1939 թվին Ֆերգանայի տնկարանում բացի աշնանավար կատարելուց, կատարված է գութանով 30 սմ խորության գարնանավար յերկու անգամ: Հողն ավելի լավ փխրացնելու համար փոցխել է նաև հողամասը:

Նա բուսակներին ու տնկիներին ծարավ չի թողնում: Վեգետացիայի ընթացքում բուսակները ջրում է 32 — 35 անգամ, իսկ տնկիները 10 — 12 անգամ: Նա շատ լավ գիտե, թե ինչ զնառ են հասցնում մոլախոտերը կուլտուրական բույսերին և ահա բերքատվութիւնը փրկում է՝ անհաշտ պայքար մղելով մոլախոտերի դեմ: Թթենու ցանքի բաժանմունքում, ցանքի մարզերը քաղհանում է 4 անգամ, իսկ միջշարքերը փխրացնում խոփը հանած ձիու գութանով: Տնկարանը քեթմենով քաղհանում է 3 անգամ և միջշարքերը փխրացնում այնպես, ինչպես ցանքի բաժանմունքը:

Բուսակների և տնկիների լավ աճման համար անհրաժեշտ է նրանց դրոից ռնունգ տալ, և ահա Վ. Վ. Ֆայուկն յուրաքանչյուր տարի տնկարանի հողը պարարտացնում է ազոտական և ֆոսֆորական հանքային պարարտանյութերով և յերբեմն ել գոմաղբով:

Լավ խնամքի շնորհիվ տնկիները տնկարանում ձևավորում է պատվաստած տարին, տեսակավոր ծառերի աճեցումը, դրանով կրճատելով մեկ տարով:

Ոգտվելով Ֆերգանայի շերամկայանի փորձերից բուսակները պատվաստում է անմիջապես ցանքի բաժանմունքում, դրանով ավելի յե արագացնում կոլխոզներին տեսակավոր տնկիների մատակարարելը:

Վ. Վ. Ֆայուկն ինչպես աօեցինք վերը, հայտնի յե նաև փորը աշխատանքի լավ կազմակերպիչ: Բոլոր բանվորներն աշխատում են անհատական գործաւքով: շնորհիվ դրան բարձրացել է բանվորների ուսկան աշխատավարձը՝ 1937 թվին 4,96 ֆոպեկի դմաց, 1938 թվին 7ռ. 10 կոպեկ: Մշտական և սեզոնային բանվորների 600/օւը ընդրկւած են Սոցիալիստական մրցուծթյան մեջ, վորոնք բոլորն ել կատարել են իրենց վրա վերցրած պարտականութիւնները:

Տնկարանում մշտական բանվորներն աշխատում են մի քանի տարի: Դադարել է բանվորների հոսունութիւնը: Բանվորներն ապրում են կուլտուրական կյանքով: Տնկարանում կառուցված է ստախանովականների համար բնակելի շենք, ունեն կարմիր անկյուն, վորտեղ ստացվում են լրագրեր, ժուրնալներ և կա ռադիօ ու գիտաարտադրական գրադարան: Բանվորներն ունեն իրենց անհատական տնտեսութիւնը, վորտեղ մշակում են բանջարեղեն, պահում են հաւ եր, խոզեր և այլն:

Վ. Վ. Ֆայուկը միաժամանակ լավ տնտեսվար է:

Ֆերգանայի տնկարանը կարճ ժամանակամիջոցում, նրա շնորհիվ, զնառ բերող տնտեսութիւնից դարձել է ոգուտ տվող տնտեսութիւն: Տնկարանը, վորն ունի ընդամենը 32 հեկտար հողամաս, 1935 — 1937 թվերին ստացել է ոգուտ 128,800 ռուբլի, իսկ 1938 թվին 141,400 ռուբլի: Նրա ղեկավարութիւնը տնկարանի ամբողջ կոլեկտիվը պայքարում է պլանների գերակատարման համար: Բացի իր անմիջական աշխատանքներից 1938 թ. նա իր վրա յե վերցրել նաև մոտակա Կոկանդի թթենու տնկարանի շեֆութիւնը:

ՏԱՇԱՅ — ՇԱԽԱՐՈՒՏԻՆՈՎ, — քթագործության ստախանովակաւք:

Ֆերգանայի դաշտի, Նամանգանի ջրջանի Լեճիճի անվան կոլխոզի հիմնական կուլտուրան բամբակն է: Յուրաքանչյուր տարի այդ կոլխոզը ցանում է 200 հեկտար բամբակ և մեկ հեկտարից ստանում է միջին բերք — 28 ցենտներ: Վերջին տարիներս Լեճիճի անվան այդ կոլխոզը բամբակին գուզընթաց զարգացնում է մի ուրիշ, նույնչափ կարևոր կուլտուրա — շերամապահութիւնը: Մինչև 1934 թիջն այդ կոլխոզն ուներ 2400 հատ շերացած, փշակավոր թթենու ծառեր և 11 հեկտար թթաստան տեղական «Մասակ» սորտից: Շատ քիչ եր այդ ծառերի բերքատվութիւնը, տերևները մանր եյին, կտրտված, կոշտ և ցած բերքատու: Ինչքան վորդ կարող եյին կերակրել այդ խղճուկ ծառե-

բը — միայն 20 — 25 տուփ: Այդպիսի ծառերով կերակրած վոր-
դերից ստացած բոժոժի բերքատվությունն ել ցածր եր' տուփից
30 — 40 կիլոգրամ: Անհրաժեշտ եր այդ ծառերը փոխարինել ա-
վելի բերքատու կուլտուրական սորտերով: Յեւ այդ բանի վրա
առաջին անգամ ուշադրություն դարձրեց կոլխոզի բերքատվու-
թյան խորհուրդի նախագահ ընկ. Շախարուտդինովը:

Ընկ. Շախարուտդինովի դործունեյությունն սկսում ե նրա-
նով, վոր 1934 թվին Ֆերգանայի շերամ կայանից ստացած
Կոկոս 70 սորտով պատվաստում ե թթենու 1,000 թուփ: Պատ-
վաստները կաշում են 94 տոկոսով: Փոխվում ե թթաստանի տես-
քը: Պատվաստած թփերն իշխում են ամբողջ թթաստանի վրա:
Նրանք տեսանելի եյին թթաստանի բոլոր կողմերից: Այդ թփե-
րի վրա մանր, կտրատված տերևների փոխարեն յերևացին խո-
շոր, մառտ տերևներ:

Փորձը հաջող եր: Չպետք ե կանգ առնել հաջողության վրա,
անհրաժեշտ եր առաջ գնալ և 1938 թվին ամբողջ թթաստանը —
11 հեկտար տարածությամբ պատվաստում ե նույն սորտով:
Բարձրանում ե թթաստանի բերքատվությունը 2 — 2,5 անգամ:
Դրա հետևանքով կոլխոզը 20 — 25 տուփի փոխարեն կերակրում
ե 50 — 55 տուփ գրենա: Վորդերը տեսակավոր թթենու բարձր վո-
րակի տերևով կերակրելու շնորհիվ բերքատվությունը մեկ տու-
փից 30 — 40 կիլոգրամի փոխարեն ստացվում ե 60 կիլոգրամ:
Այսպիսով կոլխոզը բարձրացնում ե շերամապահության վաշ թե-
քանակական կողմը, այլ և վորակականը: Յեթե նա մինչև թը-
թաստանի պատվաստելը կուլտուրական սորտերով ստանում եր
600 — 1000 կիլոգրամ բոժոժ, ապա դրանից հետո նա ստացավ
3000 — 3300 կիլոգրամ: Այդ բոլորի համար կոլխոզը պարտական
եր կոլխոզի լավագույն հարվածային ընկ. Շախարուտդինովին:
Շախարուտդինովը պատրաստում ե փորձված պատվաստողների
կողմ: Նրա ղեկավարությամբ աշխատող պատվաստողների բո-
ղադան, շնորհիվ բարեխիղճ և վորակով աշխատանքի, պատվաս-
տի արթնացման տոկոսը հասցնում ե ամենաբարձրի:

Նրա պատվաստման յեղանակը չափազանց պարզ ե.

Պատվաստող թփի վրա թողնում ե միայն մեկ ճյուղ, այն
ե կտրում ե կիսով չափ, այնուհետև թփի վրա յեղած մնացած
ճյուղերը կտրում ե և հեռացնում: Թողած ճյուղի վրա պատ-
վաստում ե կուլտուրական սորտից — միայն մեկ աչք, և հենց
վոր աչքը կաշում ե, կտրում ե թողած ճյուղը: Դրա շնորհիվ
պատվաստի աչքը զարգանում ե արագ, դարնանը պատվաստած

ճյուղը կտրում ե 4 — 6 աչքի վրա, իսկ ճյուղի կտրած մասն
իրեկ կտրոններ ոգտագործում են շրջապատի կոլխոզներում:

Կոլխոզն իր թթաստանը մշակում ե խնամքով: Միջշա-
քային տարածությունն ամեն տարի փորում են 3 անգամ, թփե-
րին տրվում ե բուկից: Վոռոգում են 7 — 8 անգամ և յուրա-
քանչյուր տարի մտցնում են պարարտանյութ:

Լեմիճի անվան կոլխոզը դառնում ե կուլտուրական թթե-
նու տարածման ոջախ: Միայն 1938 թվին կոլխոզն իր հարևան
կոլխոզներին մատակարարել ե 800 հազար կուլտուրական թը-
թենու սորտի աչքեր:

Բացի դրանից ընկ. Շախարուտդինովն ու ուրիշ կոլխոզ-
նիկներ հավաքում են կուլտուրական սորտի պտուղներ, ստա-
նում են դռանից սերմեր և ցանում հատուկ հողամասում: Դրա-
նով հնարավորություն ե ստեղծվում կուլտուրական թթենու
սերմերից ստանալ լավ ստանդարտ բուսակներ թե իրենց կոլ-
խոզի և թե շրջապատի կոլխոզների համար:

Լեմիճի անվան կոլխոզի համբավը տարածվում ե վաշ միայն
Նամանգանի շրջանում, այլ և նրանից դուրս: Շատ կոլխոզնիկ —
շերամապահներ հեռավոր վայրերից գալիս են այստեղ տեսնելու
թթաստանը և ծանոթանալու պատվաստի ու նրա խնամքի հետ:

Հարստանում և ամրապնդվում ե Լեմիճի անվան կոլտնտե-
սությունը: Միայն 1938 թվին նա ունեցել ե 1,245,000 ուրբու-
յեկամուտ:

ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ՄԱՐԶԻ ԲՐՅՈՒՆՈՎԻՑԿԻ ՇՐՋԱՆԻ ԲՈՒԴՅՈՆՈՒ ԱՆՎԱՆ № 2 ԿՈԼԵՈՁ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԻՆՏՈՒՋԻՍՏՆԵՐԸ

Բուլղոնու անվան № 2 կոլխոզն այն որինակելի կոլխոզ-
ներինն է, վորը ցույց է տալիս, թե ինչ հսկայական արդյունք-
ների կարելի է հասնել թթագործության ասպարիզում, յերբ
կիրառվում է նորմալ ագրոտեխնիկա և ուշադիր վերաբերմունք
և ցույց տրվում թթենուն:

Անուշագործության եր մատնված 1931 թվին կոլխոզում տըն-
կած 14 հեկտար տարածությամբ թփածկ թթաստանը: Մեկ հեկ-
տարում տնկված էր 10,000 թուփ: Այդ խտությունը խեղդում
էր թփերի ազատ աճմանը, իսկ յեթե դրան ավելացնենք նաև
այն, վոր 1931 թվից մինչև 1935 թվի թթաստանը համարյա
չէր մշակվել, ստացվել էր այն, վոր մեկ հեկտարից թթաստա-
նը տալիս էր 1,5—2 տոննա թթենու տերև: Ինչ յեկամուտ կա-
րող է բերել այդպիսի ցածր արտադրողականություն ունեցող
թթաստանը: Վրչինչ: Յե՛վ ահա, յերբ 1935 թվին կոլխոզում
հիմնվում է Պյատիգորսկու շերամկայանի հենակետը, այդ ժա-
մանակվանից սկսում են ուշադրություն դարձնել թթաստանի
վրա և վորոշում են նրան դարձնել կուլտուրական թթաստան:

Թթաստանը վերականգնելու համար կոլխոզի կողմից կազմ-
վում է մի մշտական շերամապահական բրիգադա 15 հոգուց
բաղկացած: Այդ բրիգադային կցվում է քաշող ուժ և գյուղա-
տնտեսական ինվենտար: Սկսվում է համառ աշխատանքը:

Նախ և առաջ նորացնում են 1,5 մետր միջշարքային տա-
րածությամբ տնկած թփածկ թթաստանները: Քանդելով մի շարք
թթենիներ ստացվում է 3 մետր միջշարքային տարածություն:
Դա հնարավորություն է տալիս միջշարքերը մշակելու ձիու քա-
շող ուժով: Այնուհետև ամբողջ վեգետացիայի շրջանում թթա-
տանը մշակում են կիրառելով հետևյալ ագրոտեխնիկաները՝

1. Գարնանը կրկնավարում են հողը:
2. Այնուհետև կուլտիվացիայի յին յենթարկում 2—3 ան-
գամ:
3. Շարքերում ձեռքով քաղհանում են 3—4 անգամ, կա-
տարելով միաժամանակ փխրացում:
4. Աշնանը կատարում են աշնանային հերկ:
Թփերին տրվում են 3 բռնուցքանի ճիշտ ձևավորում:
Գարնան և կրկնակի կերակրումների պլանի համաձայն,
թթաստանը բաժանում են գարնան և ամռան—աշնան ուղղու-
թյան: Թփերն ոգտագործվում են յուրաքանչյուր տարի, կտրե-
լով բոլոր միամյա շիվերը:

Յերկու տարուց հետո կոլխոզի թթաստանը դառնում է
ՌՍՖՍՀ-ի նոր շրջանների ցուցադրական թթաստան:

Շնորհիվ թփերի ճիշտ ոգտագործման և միջշարքերի ու
շարքամիջյան տարածությունների նորմալ մշակման, «վայրի»
սորտի թթաստանի մեկ հեկտարից նախկին 1,5—2 տոննա տե-
րևի փոխարեն, ստացվում է 3,5—4 տոննա: Ուրեմն առանց
սորտը փոխելու, լավագույն ագրոտեխնիկայի միջոցով հնարա-
վոր դարձավ բերքատվությունը բարձրացնել յերկու անգամ:

Սակայն դա բավական չէ, անհրաժեշտ էր ել ավելի բարձ-
րացնել տերևի բերքատվությունը մեկ հեկտարից, և ահա թթա-
տանին տրվում է գոմադր ու հանքային պարարտանյութեր:
Գոմադրը տրվում է աշնանավարի ժամանակ, մեկ հեկտարին
60 տոննայի հալվով, իսկ հանքային պարարտանյութերը գար-
նանը մինչև թթենիների վեգետացիայի սկսվելը: Հանքային
պարարտանյութ մեկ հեկտարին տրվում է հետևյալ նորմայով
և քանակով՝

1. Սուլֆատամոնի 21⁰/₀—600 կիլոգրամ (N—120)
2. Սուպերֆոսֆատ 17 »—540 » (P—90)
3. Կալիի աղ 40 »—150 » (K—60)

Կիրառելով այս միջոցառումը թթենու տերևի բերքատվու-
թյունը մեկ հեկտարից ստացվեց 4,6 տոննա: Իսկ յերբ թթենու
ցած բերքատու «վայրի» սորտը փոխարինեցին կուլտուրական
սորտով, (6 հեկտար Պյատիգորսկու շերամկայանի սորտ) բերքա-
տվությունը մեկ հեկտարից ստացվեց 8 տոննա:

Կոլխոզի համառ աշխատանքը ավելի էր արդյունքը: Սա-
կայն կոլխոզը միայն դրանով չբավականացավ: Նա դարձավ
վոչ միայն իր մարդի, այլ և ՌՍՖՍՀ-ի և Ուկր. ԽՍՀ-ի ուրիշ
մարզերի և նահանգների սորտային մատերյալ մատակարարող:

Այսպես 1937 թվին կոլխոզը բաց է թողել 40,000 պատվաստի աչք, 2000 ոռւբլու արժողությամբ, 1938 թ. 150,000 աչք, 7500 ոռւբլու, 1939 թվին 120,000 աչք, 6000 ոռւբլու արժողությամբ: 1939 թվին նա հնարավորություն է ունեցել բաց թողնելու 500,000 սորտային աչք:

Տերևի բերքատվությունը բարձրացնելու գործում կոլխոզն առանձնապես մեծ հաջողություններ է ունեցել վայրի տեսակը, սորտային թթենիներով փոխարինելով, Վորն սկսել են 1936 թվից: 1939 թվին կոլխոզը շերամի վորդերը համարյա ամբողջությամբ կերակրել է սորտային թթենիներով: Նա ունի բոլոր հնարավորությունները մոտակա 2—3 տարվա ընթացքում թթաստանի բերքատվությունը բարձրացնելու մեկ հեկտարից 10 տոննա:

Խոշոր հաջողություններ է ունեցել կոլխոզը պատվաստի գործում: 1936 թվից մինչև 1939 թվը նա կատարել է 60,000 աչքի պատվաստ, Վորի միջին կաշեկու տոկոսը յեղել է 86: Կոլխոզում պատվաստը կատարում են հետևյալ ձևով՝ պատվաստի համար նախատեսված թփերը դարնանը մինչև վեգետացիայի սկիզբը, արմատավզից հաշված 50 սմ բարձրության վրա կտրում են: Հետագայում յուրաքանչյուր թփի վրա թողնում են 4—5 ուժեղ ճյուղեր, իսկ ֆնացածները կտրում են հիմքից: Հետևյալ դարնանը, սկսած մայիսի 1-ից այդ ճյուղերի վրա կատարում են աչքապատվաստ: Պատվաստի առաջին տարին, վեգետացիայի վերջում, այդ ճյուղերը հասնում են 3—3,5 մետր յերկարության, վորոնք ոգտագործվում են վորդերի կերակրման ժամանակ, հետևյալ տարին: Ամռան պատվաստի ժամանակ թթենու թփերը կտրում են այնպես, ինչպես դարնանը (տես վեբը), բայց պատվաստը կատարում են նույն տարվա ամռանը, հունիսի վերջերին և հուլիսի սկզբներին, ճյուղերի հիմքում:

Կոլխոզն ունի յերիտասարդ պատվաստողների կադր, վորոնք աշխատում են առաջին անգամ և անցել են միայն գործնական սեմինար: Գյուղատնտեսական Ցուցահանդեսին արժանանալու իրավունք ձեռք բերելու համար մրցահրավիրելով միմիանց, պատվաստողների բրիգադան ամռան պատվաստների կաշեկու միջին տոկոսը հասցրել է 86-ի, իսկ առանձին ստախանովականներ—բրիգադավար՝ Յե. Ս. Մոսկալենկոյի գլխավորությամբ կաշեկու տոկոսը հասցրել են 95—97-ի, մեկ պատվաստող կապողի հետ միասին որակյալ պատվաստելով 1200 աչք:

ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԲՐԻԳԱԴԱՎԱՐ—ՄԱՀՄԵԴՈՎԸ

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսում իրենց պատվավոր տեղն են գրավում յեղբայրական Ադրբեջանից Թոուզի շրջանի Բաղիրովի անվան և Նուխու շրջանի Կիրովի անվան կոլխոզները:

Յերկու կոլխոզն էլ ցուցահանդեսում հանդես են բերված իբրև առաջնակարգ կոլխոզներ, թթենու բուսակներ աճեցնելու գործում:

Բաղիրովի անվան կոլխոզն առաջին անգամ թթենու տնկարան հիմնում է 1938 թվին: Այդ տնկարանի յերիտասարդ բրիգադավար Մահմեդով Իբրահիմ Յուսուֆ-Ողլին գերազանցորեն է կատարել տնկարանի աշխատանքները և հասել է փայլուն արդյունքների:

Ընկ. Մահմեդովն յուրաքանչյուր մեկ հեկտարից ստացել է 717 հազար բուսակ, վորից 592 հազարը ստանդարտ: Նա այդ փայլուն արդյունքներին հասել է ցանքի բաժանմունքում լավագույն ազդրոտելսնիկայի կիրառման շնորհիվ:

Լավ ծանոթ լինելով հողային աշխատանքներին ընկ. Մահմեդովը իրեն հանձնարարած աշխատանքը հենց սկզբից դնում է լավ հիմքերի վրա: Նրա տրամադրության տակ գտնված յերկու հեկտար ցանքի բաժանմունքն ու յերկու հեկտար տնկարանը հողի պատրաստման ու ցանքի խնամքի տեսակետից գտնվում են լավագույն պայմաններում:

Ցանքի համար հատկացված հողամասը փորվել է 35—40 սմ խորությամբ: Գարնանը կատարված է կրկնավար և փոցխում: Ապագա յերիտասարդ բույսերի սննդաությունն ապահովելու համար հողում մտցված է գոմաղբ մեկ հեկտարին 30 տոննայի հաշվով: Հողամասը մշակվել է մանրակրկիտորեն: Ամբողջ վեգետացիայի ընթացքում յերիտասարդ բուսակներին ծարավ չթողնելու համար, ցանքի բաժանմունքը ջրվել է 12—14 անգամ: Հողամասը մշակվել է 4 անգամ, ձեռքի գործիքներով:

Այդպիսի լավ աշխատանքի հետևանքով մեկ հեկտարից ստացվել է 592 հազար միայն ստանդարտ բուսականներ, վորի համար կոլխոզն արժանացել է Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսին:

ՌՈՒՍՍԿԵՆՐԻ ԱՃԵՑԾԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՂԽՈՉ

Նուխու շրջանի Կիրավի անվան կոլխոզը ցուցահանդեսին մասնակցում է իբրև առաջավոր կոլխոզ, թթենու բուսականների աճեցման գործում:

Այդ կոլխոզը թթենու տնկարանը հիմնել է 1938 թվին 3 հեկտար տարածության վրա:

Կոլխոզը թթենիներ աճեցնելու գծով ունենալով ընդամենը 2 տարվա փորձառիկա, կարողացել է չուրաքանչյուր մեկ հեկտարից ստանալ միջին թվով 833 հազար բուսակ, վորից միայն ստանդարտ—457 հազար: Խնչպես է հասել կոլխոզն այդպիսի բարձր ցուցանիշների: Այդպիսի բարձր ցուցանիշների կոլխոզը հասել է շնորհիվ այն բանի, վոր հողը մշակել է լավագույն կերպով և լավ խնամել թթենիները: Նախքան ցանքը կատարելը, տնկարանի հողամասում կատարված է պլանտաժային վար 40 սմ խորությամբ: Ցանքից առաջ հողն յենթարկված է կրկնավարի և փոցիված է 2 անգամ: Հողի բոլոր կողմերը մանրացված են ձեռքով: Այնուհետև ամբողջ ցանքի բաժանմունքում մտցված է պարարտանյութ—մեկ հեկտարին գոմաղբ 40 տոննայի հաշվով, ապրիլի 2-ին, իսկ ապրիլի 19-ին և սեպտեմբերի 10-ին հողին տրված է հանքային նյութերի խառնուրդ՝ մեկ հեկտարին 500 կիլոգրամ: Բուսակներին ջրով ապահովելու համար, ամբողջ վեգետացիայի ընթացքում ցանքը ջրված է 17 անգամ և կատարված է քաղհան 6 անգամ, միաժամանակ փխրացնելով հողը: Կոլխոզն իր լավագույն աշխատանքների շնորհիվ տնկարանից ստացել է 73 հազար ուղբուռ յեկամուտ:

Կոլխոզը վոչ միայն արտադրում է բուսակներ, այլ և աճեցնում է սորոտային տնկիներ՝ 1938 թվին պատվաստել է 800 տնկի, բարձր բերքատու Ազոլկայանի (ՉերիՖ—թուր) № 1 սորոտով:

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍՈՒԲ

Մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխությունը շերամապահությունը տնայնագործական ձևով տարածվան էր միայն Միջին Ասիայում և Անդրկովկասում: Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո շերամապահությունը վոչ միայն դարձավ Սոցիալիստական խոշոր արդյունաբերություն, այլ և լայնացան նրա զարգացման սահմանները և հյուսիսում ստեղծվեցին նոր շերամապահական շրջաններ: Թթագործությունը և շերամապահությունն ուժեղ թափով այժմ զարգացած է և ելավելի զարգանում է Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Գերմանական Պոլոտեյի Հանրապետությունում և ներկայիս ամենահյուսիսային շրջանում—Վորոնեժի մարզում: Այժմ Վորոնեժի մարզում թթագործությամբ և շերամապահությամբ զբաղվում են 90 կոլխոզ: Ցուրաքանչյուր տարի ավելանում է թթաստանների տարածությունը՝ այնպես՝ 1937 թվին տնկված է յեղել—345 հեկտար, 1938 թվին—438 հեկտ., 1939 թվին արդեն—938 հեկտար, 1940 թվին նախատեսված է տնկել 1850 հեկտար: Ցուրաքանչյուր տարի ավելանում է նաև բոժոժի մթերումը—1936 թվին մթերված է 39 ցենտներ, 1937—49 ցենտներ, 1938 թ.—94 ցենտներ:

Միայն 1937 թվին բոժոժի մթերման դիմաց ստացել են 27,436 ռ., բացի դրանից 6100 ուղբուռ մետաքսեղեն:

Մեր յերկրի ամենահյուսիսային մետաքս-սովխոզը գտնվում է Վորոնեժի մարզում—Նովոխոբերսկի շրջանում («Կալինովո»): Այդ մետաքս-սովխոզը կազմակերպվել է 1932 թվին:

Վորոնեժից պետք է սկսեր սովխոզն իր աշխատանքները: Թթաստան տնկելու համար չուներ իր սեփական մատերիալը, ուրեմն տնկիներ նա պետք է ստանար հարավից: Այդպես էլ արել են մինչև 1936 թվի, 1936 թվից սովխոզն արդեն աճեցնում է իր սեփական մատերիալն իր մոտ և բավարարում է վոչ միայն իր սեփական մատերիալին, այլ և մատակարարում է շրջանների կոլխոզներին: 1937 թ. նա վաճառել է 40 հազար բուսակ և 5 հազար տնկի, իսկ 1938 թվին—1,700 հազար բուսակ:

Սովխոզն ունի 13,8 հեկտար տնկարան և 128 հեկտար թփաձև թթաստան:

Հեշտ չեթ թթենու կուլտուրան զարգացնել հյուսիսում: Թթենին իբրև հարավային բույս, սիրում է արև և տաքություն. նա հարավում իրեն շատ լավ է զգում, վորովհետև իր

աճման վեգետացիան յերկար եւ իսկ ինչպէս կապրի, ու ինչպէս կզգա իրեն թթենին հյուսիսում, վորտեղ արեւը հարավի նման կիզող չե, հետեաբար և տաքութիւնը պակաս: Գարունը բացվում ե ուշ, դրա վրա ել ավելանում են ուշ գարնանային ցրտերը, վորոնք տեղի յեն ունենում յերբեմն մայիսի վերջերին: Դեռ յեղանակները կանոնավոր չտաքացած վրա յե հասնում վաղ աշունը և սեպտեմբերի մեջերին հաճախ լինում են վաղ ցրտեր: Ուրեմն հյուսիսային շրջանների թթագործութեան առաջ դրվում են չափազանց լուրջ խնդիրներ, ստեղծել կարճ վեգետացիա ունեցող և ցրտադիմացկուն սորտեր, ինչպէս և գտնել, այնպիսի մեթոդ, վորը հնարավորութիւն տա բազմացնելու և աճեցնելու յեղած սորտերից բուսակներ: Անհրաժեշտ եր մշակել այնպիսի ագրոտեխնիկա, վորը հնարավորութիւն տար կարճ ժամանակամիջոցում հասունացնել բուսակները:

Ահա այստեղ ե հարկավոր կիրառել Միչուրինի հայտնի դրվածքը, վոր մենք չպետք ե վողորմութիւն խնդրենք բնութիւնից, այլ նրան պետք ե հպատակեցնենք մեզ:

Այդ խնդիրների լուծումն իր վրա վերցրեց Տ. Ֆ. Բարմինը:

Տ. Ֆ. Բարմինը թեև հասակով ե, բայց յերիտասարդ թթագործ ե, իսկ պտղաբծութեան մեջ նա ունի 30 յերկար տարիների պրակտիկ փորձ: Բարմինն իր աշխատանքների մեջ Միչուրինի և ակադեմիկ Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքների իսկական հետևողն ե և կյանքում կիրառողը: Աշխատելով պտղաբծութեան ասպարիզում և տարված լինելով Ի. Վ. Միչուրինի հոյակապ աշխատանքներով, նա կարգում եր և ուսումնասիրում Միչուրինին: 1934 թվին Նովոսիբիրյան շրջանի կոմյերիտականների հետ Բարմինը գնում ե Միչուրինի մոտ և տեղում ծանոթանում նոր պտղատու սորտեր ստեղծելու գծով Միչուրինի կատարած աշխատանքների հետ:

Բարմինն աշխատելով մետաքս-սովխոզում աշակերտ լինելով գիտում ե կոլխոզներում աշխատող մասնագետ—ագրոնոմների փորձերը թթենու աճեցման ասպարիզում: Նա տեսնում ե վոր այդ փորձերն անհաջող են անցնում: Թթենու ցանքը լինում ե վատ, բերքատուութիւնը ցած, ստանդարտ մատերիալ ստացվում ե միայն ցանքի յերկրորդ տարին և 50%-ից ավելին լինում ե յերկրորդ սորտ ու խոտան: Աշակերտներն դիտելով Բարմինն այդ բոլորը, ուսումնասիրում ե այդ անհաջողութիւնների պատճառները և գալիս ե այն յեղրակացութեան, վոր հյուսիսում թթենիներ աճեցնելու համար անհրաժեշտ ե մշակել նոր ագրոտեխնիկա: 1936 թվին նա համառորեն աշխատում ե

նոր ագրոտեխնիկա ստեղծելու վրա, դնում ե փորձեր, ստանդարտներում ե և դիտում, թե ինչպէս են իրենց զգում թթենիներն այն կամ այն պայմաններում, վորից հետո իրոք ստեղծում ե թթենիներ աճեցնելու նոր ագրոտեխնիկա հյուսիսային շրջաններ համար:

Ինչպէս հայտնի յե թթենու ցանքը հարավում կատարվում ե ապրիլի սկզբներից, իսկ հյուսիսում մայիսի կեսերից: Այսպիսով թթենու աճման վեգետացիան գարնան շրջանում կարճանում ե մոտ մեկ ու կես ամսով: Հյուսիսում սեպտեմբեր ամսվա մեջերին հաճախ լինում են վաղ ցրտեր, մինչ դեռ հարավում առաջին ցրտերն սկսվում են նոյեմբերի յերկրորդ կեսից: Հյուսիսում վեգետացիան կարճանում ե նաև աշնան շրջանում: Դրա հետևանքով հյուսիսում թթենու աճեցողութիւնն ընթանում ե դանդաղ, ստացած բերքը լինում ե ցած վորակի և կարիք ե զգացվում ցանքը յերկու տարի պահել ցանքի բաժանմունքում: Այստեղից յեղրակացութիւն—մի տարվա ընթացքում բարձր վորակի տնկող մատերիալ ստանալու համար անհրաժեշտ ե յերկարացնել վեգետացիոն շրջանը: Իսկ դրան կահրաժեշտ ե յերկարացնել վեգետացիոն շրջանը: Նախորդ ծրեցներ յերմոցներում, ապա տաքերն ընկնելիս տեղափոխեն դաշտ և սածիլեն:

Բարմինն այդպէս ել արեց: Սերմերը ծրեցնելու համար նա գործադրեց սովորական կիսատաք տաք փեղկանոց ջերմոցներ, վորոնց յերկարութիւնը 10 մետր եր, լայնութիւնը 1,5 մետր, իսկ խորութիւնը 50 ս. մետր:

Ցանքի համար ջերմոցները պատրաստում են հետևյալ ձևով՝ մարտ ամսին ջերմոցներում լցնում են կովի և ձիու գոմաղբի խառնուրդի մինչև փեղկերը: Կովի և ձիու աղբը լցնում են հերթականորեն 10 սմ հաստութիւնից վոչ ավելի: Լցնելուց 4 ուր հետո, յերբ գոմաղբը նստում ե, ջերմոցներում նորից լցնում են լրացուցիչ կերպով գոմաղբ, հավասարացնում յեղանով, տրորում և ամրացնում փայտյա բահով: Դրանից հետո վերից լցնում են հատուկ պատրաստած կոմպոստի և հողի խառնուրդ: Հողը լցնում են 15 սմ հաստութեան շերտով այնպէս, վոր նրա մակերեսից մինչև փեղկերը ունենան 10 սմ տարածութիւն: Սերմերը ցանկուց առաջ ջերմոցի հողը փխրացնում հավասարացնում են: Թթենու սերմերը ցանում են չոր դրութեամբ, շաղացան, ապա ծածկում ջերմոցային հողով մեկ օսնտիմետր խորութեամբ, իսկ վերից 0,5 սմ հաստութեամբ մաքուր կոմպոստի շերտով, հողը չկիզակալելու համար: Յուրաքանչյուր մեկ քառ. մետր տարածութեան վրա ցանում են 7—8 զրամ սերմ և յուրաքանչյուր

Չերմոցից պտացվում է 35—40 հազար հատ լավ, ամուր բուսակներ: Յանքը կատարում են ապրիլ ամսվա առաջին որերին:

Բարմինի այդ փորձերի ժամանակ Չերմոցներում Չերմությունը պահվում էր 30—40⁰ առաջին ծիլերը յերևում են 8-րդ որը, իսկ վերջինը 12-րդ որը: Չերմոցների խնամքը կայանում է նրանում, վոր կարգավորում են Չերմությունը, քաղհանում են ցանքը և ջրում: Ծիլերը յերևալուց հետո Չերմությունը պահվում է 20—30⁰: Մշտական այդ Չերմությունը պահելու համար անհրաժեշտ է ամեն որ ողափոխել Չերմոցները, նայած յեղանակին, որվա մեջ մի քանի անգամ բացելով փեղկերը:

Չերմոցները ջրվում են նայած յեղանակներին, ըստ անհրաժեշտության, բայց վոչ պակաս քան յերկու անգամ հնգորյակում: Ջրելու նորման է՝ ծիլերը յերևալուց հետո առաջին որերը մեկ դույլ, իսկ հետագայում կես դույլ՝ յուրաքանչյուր փեղկին: Ջրում են անպայման ցնցուղով:

Յերբ բուսակներն ունենում են 3—5 տերև, անհրաժեշտ է տեղափոխել դաշտ և սածիլել: Ընկ. Բարմինը գտնում է, վոր պակաս, ինչպես նաև ավելի տերևներ ունենալու դեպքում, բուսակները լավ չեն կաշում: Նախքան բուսակների սածիլելը պարտաքանում են հողը: Յերիտասարդ բուսակներին սննդով ապահովելու համար մեկ հեկտարին տրվել է գոմաղբ 60 տոննայի հաշվով: Սածիլված բուսակները լավ խնամելու համար, հողամասը բաժանում են մեկ մետր լայնություն ունեցող մարդերի: Մարդերը շարքի յերկարության ուղղահայաց բաժանում են 5 շարքի, 20 սմ տարածությամբ. յուրաքանչյուր մարդի մեջ թողնում են 60 սմ լայնությամբ ճանապարհներ: Մարդերի միջի ճանապարհների այդպիսի տարածությունը թույլ է տալիս հետագայում բուսակները քանդել մեքենայով: Շարքերում բուսակները տնկում են մեկը մյուսից 10 սմ հեռավորությամբ: Մեկ հեկտարին այդպիսով ընկնում է 313 հազար հատ: Հողամասն այս ձևով պատրաստելուց հետո բուսակները Չերմոցներից հանում են սածիլելու համար: Մինչև բուսակների քանդելը Չերմոցները ջրում են շատ լավ, վորպեսզի հանելու ժամանակ արմատները չփչանան: Բուսակները հանում են հողով և տեղավորում են փոքր արկղներում: Տնկելու ժամանակ առանցքային արմատը կարճացնում են $\frac{1}{3}$ -ի չափով, կտրելով անմիջապես յեղունակներով: Տնկելու համար գործադրում են ձողիկներ, վորոնցով 10 սմ տարածության վրա փոսեր են բացում և բուսակներն անմիջապես տնկում փոսերում: Սածիլները չչորանալու համար արմատները հողով ծածկում են շատ լավ: Սածիլելուց

հետո բուսակները ջրում են, յուրաքանչյուր մեկ քառ. մետրին տալով մեկ դույլ ջուր: Սածիլումը կատարում են ամբողջ որվա ընթացքում: Յուրաքանչյուր բանվորուհի աշխատանքի որվա ընթացքում սածիլում է 1,5-ից մինչև 2,5 հազար բուսակ: Վորոնեժի պայմաններում, սածիլված բույսերը չեն ծածկվում: Լավ սածիլելու դեպքում բուսակների կաշիլու տոկոսը հասնում է 95-ի: Դաշտում սածիլված բուսակների խնամքը կայանում է նրանում, վոր ամբողջ վեգետացիայի ընթացքում շարքերի մեջ քաղհանում են հողուրագող և փխրացնում հողը 5 անգամ, իսկ շարքերում մոլախոտերը քաղհանում են ձեռքով: Բուսակների աճեցողությունը կարգավորելու համար հունիս ամսվա յերկրորդ կեսերից սկսած մաքրում են արմատավղից դուրս յեկած շիվերը. դրանց հեռացման շնորհիվ ուժեղ պարգանում են այն շիվերը, վորոնք գտնվում են բնիկի 20 սմ բարձրության վրա:

Բարմինը բացի Չերմոցային ցանքի փորձից, դրել է նաև փորձ սերմերը ցանելով անմիջապես հողում: Բայց այդ սերմերը վոչ թե ցանվում էին, այնպես, ինչպես մեզ մոտ հաբավում, այլ նախորդ յենթարկելով յարովիղացիայի: Նախքան ցանելը, հողը դարձանը փորում են բահով մեկ բահի խորությամբ, այնուհետև փոցխում, հավասարեցնում և ամրացնում փայտյա գլանակով: Հողամասերը պարանով բաժանում են շարքերի, վորոնց միջի տարածությունը թողնում են 45 սմ: Յանքը կատարում են մայիսի 8-ին, ակոսների մեջ, այնուհետև ծածկում են սովորական հողով և հողը չկեղևակալելու համար վերևից լցնում են կոմպոստ: Սերմերի ծիլն արագացնելու համար նա վորոշում է յարովիղացիայի յենթարկել նրանց: Թթենու սերմերի յարովիղացիան Բարմինը կատարում էր յերկու ձևով—

Առաջին—սերմերը յերեք որ թրջում է ջրում, տակառի մեջ, յուրաքանչյուր որ փոխում է ջուրը: Ջրի Չերմությունը լինում է սենյակի Չերմությամբ: Թրջելուց հետո սերմերը չորացնում է արևոտ տեղում, քամու հոսանքի տակ, այնուհետև ցանում: Այս ձևով յարովիղացիայի յենթարկած սերմերի ծիլերը յերևում են ցանքի 10-րդ որը:

Յերկրորդ—Սերմերը լցնում է տուրակների մեջ խորասուզում ջրում, վորի Չերմությունը լինում է սենյակի Չերմությամբ և այդ ձևով թրջում է 3 որ: Այնուհետև սերմերը տեղավորում է վառարանի մոտ, վորտեղ Չերմությունն ավելի բարձր է: Տուրակները միշտ թրջում է 9-րդ որը յերևում են ծիլերը: Դրանից հետո մեկ մաս սերմը զգուշությամբ խառնում

և յերկու մաս ավաղի հետ և ցանում: Ծիրիկ 7 յերևում են ցան-
քի 4-րդ որը: Համեմատած չոր սերմերով ցանածի հետ՝ առա-
ջին ձևով պատրաստած սերմերը ծլում են 5—6 որով շուտ:

Յերկրորդ ձևով պատրաստելու դեպքում նույնպես տալիս
և դրական արդյունք—ծիրիկը յերևում են շատ շուտ: Բայց այս
դեպքում անհրաժեշտ է սերմերը ձիշտ ծլեցնել, չթողնել, վոր
նրանք չորանան և պետք է պահպանել հավասարաչափ ջեր-
մություն: Բացի դրանից ծլած սերմերով ցանքը հողում կարե-
լի յե կատարել միայն այն դեպքում, յերբ դաշտային պայ-
մանները ապահովված են պահանջված քանակութամբ խոնա-
վությամբ և ջերմությամբ. հակառակ դեպքում, սերմերը հո-
ղում կարող են փտել և ծիրիկ չտալ:

Ընկ. Բարմինը նոյեմբերի 15-ին քանդել է տալիս բու-
սակները և համեմատում ջերմոցներում ծլեցրած, հետո հո-
ղում տեղափոխած և անմիջապես հողում ցանված սերմերից ստաց-
ված բուսակներն իրար հետ: Տարբերությունը լինում է մեծ,
վորն արտահայտվում է հետևյալում—

1. Սածիլած բուսակների արմատներն ունենում են 4—5
հիմնական արմատ, փնջաձև ճյուղավորված, իսկ սերմը հողում
ցանած բուսակների արմատներն ավելի թույլ են:

Այս հանգամանքի շնորհիվ սածիլած բուսակներն ավելի
լավ աճ են ունեցել, վորովհետև սնունդը հողից ավելի լավ են
յուրացրել:

2. Դրա հետևանքով սածիլած բուսակների յերկարությու-
նը յեղել է 60 սմ-ից—140 սմ, իսկ միջինը 34 սմ, վոր սածի-
լածների միջին յերկարությունը յեղել է 28 սմ:

3. Հստ վորակի սածիլածները յեղել են անհամեմատ բար-
ձրը: Վերցնելով յուրաքանչյուրից 40 հաղար բուսակ և տեսա-
կալորման յեն յարկելով նրանց, ստացվել է հետևյալը—

	Եքստրա 0/0	1-ին տեսակ 0/0	2-րդ տեսակ 0/0	3-րդ տեսակ 0/0	
Սածիլած	62,5	25,0	12,5	—	100
Վոր սածիլած	—	20,0	62,5	7,	100

4. Թե սածիլած և թե ոչ սածիլած բուսակները ժամա-
նակին են վերջացրել աճեցողությունը և հասունացել են:

5. Մեկ հեկտարից ստացվել է սածիլածների դեպքում—313
հաղար, իսկ վոր սածիլածների դեպքում, 400 հաղար բուսակ:

6. Թեպետ վոր սածիլացման դեպքում բերքատվությունն
ավելի բարձր է, բայց վորակը համեմատաբար ցածր է:

7. Միևնույն ծրուակությունն ունեցող սերմերից մեկ հեկ-
տարին պահանջվել է սածիլացման դեպքում—0,5 կգր, իսկ վոր
սածիլածման դեպքում—12 կգր:

8. Ծախսերը սածիլացման դեպքում ավելի բարձր չեն, հա-
մեմատած վոր սածիլածների հետ:

Այսպիսով Բարմինի փորձերը ցույց տվեցին, վոր հնարա-
վոր է յերկարացնել վեգետացիոն շրջանը և ստանալ Վորոնեժի
պայմաններում բարձր վորակի տնկող մատերիալ:

Փորձերի արդյունքներն այնքան փայլուն եյին, վոր 1937
թվին արդեն սկսեցին մասսայականորեն ցանքը կատարել դաշ-
տային պայմաններում: 1937 թվին մետաքս-սովխոզի պլանն
եր մեկ հեկտարից ստանալ 400 հաղար բուսակ: Սակայն Բար-
մինը մտադրվել է պլանը գերակատարել, առանց իջեցնելու բու-
սակների վորակը: Ցանքի համար նախատեսված 1,5 հեկտար
հողամասը մշակել է հետևյալ ձևով՝

Աշնանը կատարել է աշնանավար 20 սմ խորությամբ. գար-
նանն, ապրիլի սկզբներին, յերբ հողը թեթև չորանում է, փոց-
խում է զիգ-զագով յերկու հետք: Ապրիլի վերջին կատարում է
տրակտորային գութանով 25 սմ խորությամբ վար, շուտ տալով
առը: Այնուհետև նորից փոցխում է, այս անգամ մեկ հետքով:
Ցանքից առաջ, մայիսի մեջերին կատարում է զապանակավոր
կուլտիվատորով կուլտիվացիա 10 սմ խորությամբ: Կուլտիվա-
ցիան կատարում է վերջին գութանավարի ալոսների նկատ-
մամբ ուղղահայաց: Այս ուղղությամբ կատարված կուլտիվա-
ցիան վոր միայն փխրացնում է հողը, այլ և հավասարեցնում է:
Այս բոլորից հետո դարձյալ փոցխում է, այս անգամ արդեն նո-
րից յերկու հետքով: Վորոգման գործը կարգավորելու, սերմի
քանակն ամբողջ հողամասում հավասարապես տալու, ինչպես
նաև խնամքն ապահովելու համար, ամբողջ դաշտը բաժանում
է 0,25 հեկտար հողակտորների: Ցանքը կատարվել է մայիսի
20-ին, 3—4 սմ խորությամբ. սերմերը ծածկել են սովորական
հողով, իսկ վերից լցրել 6 սմ ցանցով մաղած կոմպոստ: Սեր-
մերը տնտեսելու, ինչպես նաև հողում հավասարապես ցանելու
համար ցանքը կատարել են շշերով: Շշերի բերանը ամրացված
համար ցանքը կատարել են շշերով, վորոնք ունեցել են 3 սմ լայնու-
քով անցքեր: Ցանքից հետո հողամասը ցնցողով ջրվել է ա-
թյամբ, մեկ հեկտարին գործադրելով 5000 դույլ ջուր: Ամբողջ վե-
գետացիայի ընթացքում շաղկապները քաղհանվել են 3 անգամ, իսկ
միջշաղկապները 5 անգամ հողուրազով, կատարելով միաժամանակ
փխրացում: Ջրվել է մինչև բուսակների առաջին յերեք տերև

յերևալը: Հոգն աշխատեա մշակելով ու ցանքը վորակով խնամելով, բուսակները քանդելուց հետո, ստուգումը պարզում ե, վոր մեկ հեկտարից ստացվել ե վոչ թե 400 հազար, այլ 812 հազար, այլանը գերադասարելով յերկուսից ավելի անգամ: Բացի դրանից չի իջել բուսակների վորակը: Առանձին բուսակների յերկարութունը յեղել ե 70 սմ, իսկ միջին յերկարութունը 25—30 սմ: Ստանդարտ մատերիալը յեղել ե 50 տոկոս:

Պայքար հեկտարից մեկ միլիոն բուսակ ստացալու համար

Այսպիսի հաջողութիւններ ունենալուց հետո, ինչպէս նաեւ արդեն գտնելով վորոնեթի կլիմայական ու հողային պայմաններում բուսակների աճեցնելու մեթոդը, Բարմինն իր վրա յեկերցնում մի չափազանց պատասխանատու Սոց-մրցման պայմանագիր—1938 թվին տալ յուրաքանչյուր մեկ հեկտարից մեկ միլիոն բուսակ: Մեծ եր պատասխանատուութիւնը, ուստի անհրաժեշտ եր նախորոք պատրաստուիլ, այն ել լալ պատրաստուիլ: 1938 թվին ցանք կատարելու համար նա նախապատրաստուիլ ե 1937 թվի աշնանից. պատրաստում ե կոմպոստն ու ջերմոցային հողը, ստուգում ե ջերմոցները, աշնանը հողը վարում ե 25 սմ խորութեամբ, իսկ գարնանը հողը ժամանակին պատրաստում ե ցանքի համար: Իրենից անկախ պատճառներով մայիսի 10-ին նախատեսված ժամկետի փոխարեն, ցանքը ստիպված ե լինում կատարել 4 նվազով, վորոնցից առաջինը մայիսի 18-ին, իսկ վերջինը՝ մայիսի 31-ին: Ցանելուց առաջ սերմերը յնթարկվում ե յարովիղացիայի, 3 որ պահելով փայտյա տակառների մեջ. փոխում ե ջուրն ամեն որ: Թրջելուց հետո չորացնում ե սովորոտ տեղում ե ապա ցանում: Ցանքի համար ակոռները քաշում ե ձիու մարկչորով, վորը միանգամից գծում ե 6 ակոռ, համապատասխան խորութեամբ:

Մեկ միլիոն բերքն ապահովելու համար, սածիլովոլ բուսակները տնկում ե ավելի խիտ. այսինքն՝ մեկ մետրանոց լայնութիւն ունեցող մարգերում քաշում ե 3 ժապավեն, յուրաքանչյուր ժապավենում 3 շարք: Շարքերում բուսակները շախմատաձև տնկում ե (սածիլում ե) 5 սմ տարածութեամբ: Ժապավենների մեջ թողնում ե 35 սմ. տարածութիւն իսկ շարքերի մեջ 0,5 մետր: Այսպիսի խտութեամբ սածիլելու դեպքում մեկ հեկտարից ապահովում ե մեկ միլիոն բերքը: Սկսվում ե բերքը պահելու համար պայքարը:

Սերմերը տարբեր ժամանակներում ցանելու պատճառով ծիւրերի աճը բոլոր տեղերում միասնեակ չեն լինում: Այն ժա-

մանակ, յերբ առաջին հերթին ցանված սերմերից դուրս յեկած բուսակներն ունենում են 3—4 տերև, ուշ ցանքը միայն նոր ե սկսում ծիւր: Այդպիսի անհավասար ծիւրը դժվարացնում ե խնամքը: Բայց դա բավական չեր. դաժան բնութիւնն իրեն ցույց տվեց: 1938 թվին վորոնեթի մարզի Հարավ-Արևելյան մասում ամառը բացառապէս աննպաստավոր եր: Մայիս ամսից մինչև հոկտեմբեր ամիսը բոլորովին տեղումներ չեն յեղել. ամբողջ ամառը յեղանակը յեղել ե տաք, փչել ե անողոք տաք քամին, խոնավութեան նշույլ անգամ չի յեղել, վորի հետեանքով չնայած ձեռք առած միջոցներին, այնուամենայնիվ վերջին ժամկետի ցանքի մի մասը չորացել ե: Բարմինն ընկնում ե բնութեան դեմ անհաշտ պայքար մղելու բաղձը. ինչ գնով ել լինի, պետք ե լարել բոլոր ուժերն ու հնարավորութիւններն ե փրկելով ցանքը, կատարել Սոց-մրցման պայմանագիրը:

Չնայած ժամանակին պատրաստ ե յեղել վոռոգման ցանցը, բայց ցանքը ջրվել ե ձեռքով ե առաջին հերթին ուշ ժամկետին ցանածները: Այդպիսի պայմաններում ուշանում ե նաեւ սածիլման ժամկետը. նախատեսված մայիսի 25-ի փոխարեն սածիլացումը կատարվում ե հունիսի 17-ին. մի հանգամանք, վորը նույնպէս բացասաբար ե ազդում սածիլած բույսերի վրա: Սածիլացումը կատարվում ե 40⁰ ջերմութեան տակ. Սածիլած բույսերը տանջվում են ուժեղ շոքերից: Փրկել... փրկել բույսերը ինչ գնով ել լինի ե սկսվում ե ջրելու համար աշխատանքը: Ջրում են ըստ հողակտորների այն ժամերին, յերբ ջերմութիւնը համեմատաբար ցածր ե—յերեկոյան ժամի 5-ից մինչև ժամի 9-ը ե գիշերվա ժամը 3-ից մինչև առավոտյան ժամը 8-ը: Մեծ աշխատանք ե թափում ջրելու գործում Բարմինի ոգնական բրիգադավար՝ Չուպրինինը: Հուլիսի տաք որերին, յերբ ողի ու հողի ջերմութիւնն չափազանց բարձր եր, յերբ անհրաժեշտ եր ջրել նուրբ բույսերը, հակառակ դեպքում նրանք կչորանային ընկ. Չուպրինինը Բարմինի հետ կազմակերպում ե գիշերային վոռոգում ե գիշերվա ժամը 8-ի փոխարեն դաշտից հեռանում ե ժամը 11-ին, իսկ գիշերը ժամը 2-ին նա նորից վոռքի յե յեկնում ու գնում ե արթնացնելու ընկերներին, վորպէսզի ժամը 3-ին նրանք դուրս գան աշխատանքի: Բանվորները տեղնելով Բարմինի ե նրա ոգնական Չուպրինինի նվիրված աշխատանքը, իրենք ել համերաշխ դուրս եյին գալիս աշխատանքի, փրկելու յերիտասարդ բույսերը:

Մատաղ բույսերին փրկելու համար յերկրորդ կարևոր աշխատանքն եր հողի փխրեցնելը: Չե՞ վոր հողի փխրեցումը, դա

չոր վոտոգում ե, ուրեմն խոնավությունն անպայման պետք է պահել հողում, չթողնել, վոր աննպատակ կորչի: Յիվ յուրաքանչյուր վոտոգումից հետո, յերբ հողը հնարավորություն եր տալիս իրեն փխրեցնելու, կատարվում եր փխրեցում:

Անքուն գիշերներ և անհանգիստ որեր ե անցկացրել ընկ. Բարմինն իր վրա դրված Սոց-մրցման պայմանագիրը կատարելու համար: Անհաշտ պայքար մղելով բնության դեմ, նա հաղթանակում ե բնությանը և մեկ հեկտարից տալիս ե 1,500,000 բուսակ, վորից 520,000 ստանդարտ: Սածիլած բույսերի յերկարությունը լինում ե 95 սմ—1 մետր, միջին բարձրությունը 50 սմ, իսկ դաշտում ցանած բույսերի յերկարությունը լինում ե 80—90 սմ, իսկ միջին յերկարությունը 28 սմ:

Այդպիսով Բարմինը կլիմայական այդպիսի անբարենպաստ պայմաններում իր Սոց-մրցման պայմանագիրը գերակատարում ե 500,000-ով, իսկ սովխոզին տված մեկ հեկտարից 500,000 հատ բուսակ ստանալու դիմաց պլանը գերակատարում ե յերեք անգամ:

Ինչն եր պատճառը, վոր ընկ. Բարմինը կարողացավ ստանալ բուսակների այդպիսի չտեսնված, ռեկորդային բերք:

Հիմնական պատճառը աշխատանքի ճիշտ կազմակերպելն ու աշխատանքի Ստախանովյան մեթոդի կիրառելն եր: Առաջին տարիներին ցանքի բաժանմունքի համար սովխոզը չուներ մըշտական կայուն բրիգադա. այդ հանգամանքը բացառաբար եր ազդում աշխատանքի արտադրողականության ու վորակի վրա: Չլինելով մշտական բրիգադա, աշխատանքի մեջ առաջանում եր դիմադրելություն, անպատասխանատվություն:

Թթագործության աշխատանքին անցնելուց հետո, Բարմինի առաջին գործն ե լինում կազմակերպել ցանքի բաժանմունքի համար մշտական բրիգադա: Այս հանգամանքը հնարավորություն ե տալիս բրիգադայի անդամներին յուրացնել թթնուց ցանքի ագրոտեխնիկան, բարձրացնել իրենց գիտելիքները թթագործության առարկիվում, ինչպես նաև աշխատանքի արտադրողականությունը:

Բարմինը ցանքի բաժանմունքի բրիգադան բաժանում ե 4 ողակի, յուրաքանչյուր ողակը կազմված 5 մարդուց: Յուրաքանչյուր ողակին ամրացնում ե 0,25 հեկտար տարածություն: Ողակն այդ հողամասում կատարում ե այն բոլոր աշխատանքները, ինչ վոր պահանջում ե ցանքի ողակից մինչև բուսակների քանդելը: Ողակի յուրաքանչյուր բանվոր գիտի իր որվա անելիքը, աշխատանքի վերջում բրիգադերն ստուգում ե կատա-

րած աշխատանքը և գրանցում: Ամբողջ բրիգադան ընդգրկված ե ՍՈՑՄՐՑՄԱՆ մեջ: Յուրաքանչյուր ողակ մրցման ե հրավիրում մյուս ողակին՝ լավագույն ցուցանիշներ տալու համար: Դրա հետևանքով բանվորական բրիգադաները պահները գերակատարում են 200—300 տոկոսով: Բրիգադավար Չուպրինին հետ միասին իրենց կատարած լավագույն աշխատանքների համար պարգևատրված են Կրավչենկոյի ու Նիկոլայիվի հարվածային բրիգադաները:

Սովխոզը վորոշում ե հյուսիսում ունենալ բարձրաբուն թթաստան: Դրա համար անհրաժեշտ ե կազմակերպել տնկարան: Պետք ե այնպես անել, վոր յերկու տարվա ընթացքում հնարավոր լինի ստանալ բարձրաբուն թթենիներ, որակայն վորոնց պակշը կառուցվի մեկ մետր բարձրության վրա և աշխատանքի ժամանակ տնկիները չցրտահարվեն հենց տնկարանում: Այդ բանին հասնելու համար, նա վորոշեց տնկարանում բուսակները տնկել յերկու խտությամբ—առաջին մեկ հեկտարին 20 հազար, իսկ յերկրորդը—40 հազար հատ: Առաջին դեպքում տնկիների միջարքային տարածությունն ընդունում ե մեկ մետր, իսկ բույսը-բույսից 0,5 մետր: Իսկ յերկրորդ դեպքում միջարքային տարածությունը մեկ մետր, իսկ բույսը-բույսից 25—30 սանտիմետր: Նրա դիտողությունները ցույց տվին, վոր մեկ հեկտարին 40,000 խտության դեպքում բույսերի զարգացումը ճնշվում ե: Ծիշտ պակշ կազմակերպելը դժվարանում ե, արմատներն ու ճյուղերը խճճվում են միմյանց մեջ, այստեղից առաջանում ե յույսի ու անդանյութերի պակասություն. հետևաբար տունկի տարեկան աճը լինում ե պակաս: Որինակ՝ Լուկոշված սորտի տնկիները մեկ հեկտարին 20,000 հատ տնկելու դեպքում, տվել են աճ 2—2,5 մետր, իսկ 40,000 հատ տնկելու դեպքում, 1—1,5 մետր:

Վորոնեժի մարզի պայմաններում հաճախ լինում են դեպքեր, վոր միամյա տնկիները տնկարանում չորանում են 30—40 սմ: Յեթե տնկիներն աճում են 1—1,5 մետր, ապա այդպիսի չորացման դեպքում նրանցից հնարավոր չե ստանալ բարձրաբուն թթենի, իսկ 2—2,5 մետր աճ ունենալու դեպքում յեթե գագաթից հիշյալ յերկարությամբ ճյուղերը չորանան ել, հնարավոր ե ստանալ բարձրաբուն թթենի: Բարմինն իր պլանի մեջ մտցրել ե—ուսումնասիրել տնկիների խտության հարցը մանրակրկիտորեն և բազմակողմանիորեն:

Բարմինը Խորհրդային Միության թթագործների մեջ աչքի յե ընկել վոչ միայն ցանքի բաժանմունքից այդպիսի ռե-

Վորդային բերք ստանալու համար: Նա հայտնի յե նաև նրա-
նով, վոր թթագործության ազրոտեխնիկայի մեջ մտցրել ե մի
շարք ռացիոնալիզատորական նորամուծություններ:

Ինչպես յուրաքանչյուր առաջավոր թթագործ, այնպես ե
ընկ. Բարմինն իր առաջխնդիր եր դրել—ծախսելով ըստ հնա-
րավորին ամենաքիչ բանվորական ուժ, ստանալ բարձր ե
միևնույն ժամանակ վորակով բերք: Նա լուծում ե նաև այդ
խնդիրը: Նրա ռացիոնալիզատորական առաջարկները, վորոնք
կիրառվում են արտադրության մեջ, հետևյալներն են՝

1. Ցանքը կատարում ե վոչ թե ձեռքով, այլ շերով, վո-
րոնց բերանին անց են կացնում փայտյա խցաններ 3—4 մմ
անցքերով: Սա տալիս ե բանվորական ուժի մեծ տնտեսում,
վորովհետև յեթե մեկ հեկտար տարածությունը ցանելու համար
պահանջվում ե 8 բանվոր, շշով ցանելու ժամանակ պահանջվում
ե 4 բանվոր: Բացի դրանից տնտեսվում են սերմերը ե ցանվում
ե հավասար:

2. Ցանածն սերմերը Փածկելու համար հնարել ե այնպիսի
գործիք, վոր անցնելով ակոսների կողքերով, սերմերը ծածկում
են հողով 2—3 մ խորությամբ:

3. Ցանքի ակոսներն ուղիղ ե արագ գծելու համար գոր-
ծադրում ե իր հնարած ձիու մարկյորը, վորը միանգամից քա-
շում ե 6 ակոս: Ակոսների հեռավորությունները նախատեսված
են այնպես, վոր հետագայում հնարավոր լինի տրակտոր գոր-
ծադրելը:

4. Թթագործության մեջ ամենաշատ բանվորական ձեռք ե
պահանջում բուսակների քանդելը: Բացի դրանից, դա ծանր
աշխատանք ե. անհրաժեշտ ե այդ աշխատանքը մեխանիզա-
ցիայի յենթարկել ե նա ձակնդեղ քանդող մեքենան հարմա-
րեցնում ե թթենու բուսակներ քանդելու համար: Այդ մեքե-
նայի կտրող դանակներն անցնելով բուսակների շարքերից
10—12 մ հեռավորությամբ, առանց արմատային սխտեմին
ֆնառ հասցնելու, կտրում են բուսակների առանցքային ար-
մատները ե թողնում հողում: Այնուհետև բանվորներն ընտրե-
լով ստանդարտ բուսակները, հանում են, մնացածները թողնե-
լով հողում: Վերջիններս հողում ամրացնելու նպատակով ամ-
բողջ հողամասով գլորում են փայտյա գլանակ:

Ձեռքով քանդելու ժամանակ ստանդարտ բուսակներն ընտ-
րելուց հետո անհրաժեշտ ե մնացածները նորից տնկել հողում,
հետագա աճեցման համար, վորը պահանջում ե կրկնակի աշ-
խատանք, իսկ մեքենայով քանդելու դեպքում, նորից տնկելու
կարիք չկա, վորովհետև բուսակները մնալով, նորից ամրացած

հողում, հետևյալ տարին շարունակում են աճեցողությունը:
Այսպիսով տնտեսվում ե բանվորական ուժը:

5. Բացի վերոհիշյալներից, նա հնարել ե ձիու կուլտիվացիա,
վորը մեծ չափով բարձրացնում ե թթատանների ե տնկարան-
ների միջշարքային տարածությունների փխրացման աշխա-
տանքների արտադրողականությունը:

Բարմինը կանգ չի առնում այս հնարագիտությունների
վրա. նա մտադրվել ե հնարել այնպիսի ցանող մեքենա, վորը
միաժամանակ ե ցանի թթենու սերմերը ե ծածկի կոմպոստով:
Նա մտածում ե հնարել նաև տնկիներ տնկող մեքենա:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի տարածքի տնտեսության ավագ գիտական աշխատակից ընկ. Ս. Գ. Բեգարաշվիլին գրանցված է «Այստիպ գործում», վորովհետև նա մշակել է կերակրման ժամանակ թթենիների պսակի պատվաստման այնպիսի մեթոդ, վորը թույլ է տալիս ցած բերքատու թթենիների տեսակները փոխարինել բարձր սորտերով, առանց կորցնելու թթենու տերևի բերքը:

Ինչպես հայտնի յե ոգտագործվող թթենու պսակի ճյուղերը պատվաստելու համար անհրաժեշտ է պատվաստը կատարել ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին: Այդ ժամանակ կատարել պատվաստ, նշանակում է զրկվել տվյալ ծառերի տերևի բերքից: այդ իսկ պատճառով պսակի վրա պատվաստը կատարվում է ամառը—հունիսի վերջերից մինչև հուլիսի սկզբները, թթենու ծառն ոգտագործելուց հետո: Սակայն ամռան պատվաստի ճյուղերը լրիվ կերպով չեն զարգանում ու փայտանում, ժամանակի կարճ լինելու պատճառով:

Ինչպե՞ս կատարել պատվաստը, վորպիսի և ոգտագործվեն ծառերը վորդի կերակրման համար, և միաժամանակ ցած բերքատու ծառերը փոխարինվեն բարձր բերքատու սորտերով:

Ահա այդ խնդրի լուծումը տվեց ընկ. Բեգարաշվիլին: Գարնանը պատվաստելու համար, անհրաժեշտ է պատվաստացու կտրոնները վերցնել աշնանը և պահել մինչև գարուն (ապրիլ—մայիս) և ապա պատվաստել: Սակայն պատվաստացու ներքի պահելու տեխնիկան այնպիսին է, վոր հնարավորություն չի տալիս այդ ձմեռային կտրոններով պատվաստել մինչև հունիս, հուլիս ամիսները: Յեթե գտնվեք կտրոնների յերկարատե պահելու տեխնիկան, ապա նշանակում է կարելի յեր յերկարացնել պատվաստի ժամկետը, միաժամանակ ոգտագործելով թթենու ծառերի բերքը (տերևը) վորդի կերակրման համար: Նա գտավ ձմեռող պատվաստացու կտրոնների յերկարատե պահելու տեխնիկան:

Նրա փորձերը ցույց տվին, վոր կտրոնների աչքերի բացելու կանգ առնելը կախված է ցածր ջերմաստիճանից: Որի-

նակ՝ գարնանն աչքերն ուռչելու սկզբի մոմենտից, կտրոնները կարելի յե պահել առանց աչքերը բացելու, մինչև 3,5 ամիս, յեթե նրանք պահվին 1-ից մինչև 5 աստիճան ջերմություն պայմաններում: Ինչքան բարձրանում է ջերմությունը, այնքան կտրոնների աչքերն ավելի շուտ են բացվում: Որինակ՝ 5-ից մինչև 8 աստիճանի դեպքում աչքերն առանց բացվելու, պահվում են 2,5 ամիս, իսկ 8-ից մինչև 12 աստիճան ժամանակ, 1,5 ամիս. այնուհետև աչքերն առանց բացվելու ավելի յերկար են պահվում մութ պայմաններում: Մինչև իսկ թույլ լույսն առաջացնում է աչքերի բացումը:

Ամենալավ արդյունքը տալիս է այն դեպքում, յերբ պատվաստացուները պահվում են սառցարաններում 1-ից մինչև 5 աստիճան ջերմություն պայմաններում: Յեթե չկան սառցարաններ, ապա կարելի յե պահել նույն պայմաններում չոր, սառը և մութ նկուղիներում:

Պատվաստացու կտրոնների պահելու պայմանները գտնելուց հետո կարելի յե յերկարացնել պատվաստի ժամկետը: Նրա փորձերը ցույց են տալիս, վոր ձմեռող պատվաստացուի աչքերով պատվաստելու դեպքում, վոչ միայն յերկարացվում է պատվաստի ժամկետը (մինչև 4 ամիս), այլ այդպիսի աչքերով պատվաստելու դեպքում պատվաստների կպչելու տոկոսը ավելի բարձր է: որինակ՝ ձմեռող պատվաստացուներին աչքերով ապրիլի 17-ից մինչև հուլիսի 10-ը ժամկետի պատվաստները կպել են գարնան շրջանում (ապրիլի 17-ից մինչև մայիսի 15-ը) 72,2 տոկոսով, իսկ ամռան շրջանում (հունիսի 2-ից մինչև հուլիսի 10-ը) մինչև 91 տոկոսով: Մինչդեռ հուլիսի 17-ից մինչև 20-ն ամռան շրջանի աչքերով կատարած պատվաստները կպել են 38 8%-ով: Այսպիսով յերկարացնելով գարնան պատվաստների ժամկետը, հնարավորություն է տրվում գարնան կերակրման ժամանակ ոգտագործել ծառի տերևը կերակրման համար և նույն տարին իսկույն ծառը պատվաստել բարձր բերքատու սորտով: Այնուհետև պատվաստած շիվը քամիներին կտրվելուց ազատելու և պատվաստն ամրապնդելու, ինչպես նաև մի աչքից ավելի շատ շիվեր ստանալու նպատակով, ընկ. Բեգարաշվիլին առաջարկում է ծերատել պատվաստած ճյուղը, յերբ նա հասնում է 8—10 սմ. բարձրություն: Ծերատելով, յերբ նա հասնում է 2-ից 4-ից դուրս են գալիս մոտ 2—5 կողքի մնացած պատվաստի շիվից դուրս են գալիս մոտ 2—5 կողքի մի շիվեր: Իսկ վորովհետև մի ծառի վրա կատարվում է վոչ թե մի աչքի պատվաստ, այլ 3—4, ապա միջին թվով այդ ծառի գագաթն ունենում է մոտ 10—15 նոր շիվեր, վորոնք մինչև վե-

գետացիայի վերջը հասնում են մեկ մետրից բարձր։ Այս ձևը հնարավորություն է տալիս պատվաստի տարին անգամ, մի պատվաստած աչքից կազմել ծառի պտակը։

Այնուհետև նրա փորձերը ցույց են տալիս, վոր յեթե պատվաստի որը պտակի պատվաստակալի ճյուղը կտրված չե ամբողջովին կամ մասնակիորեն, ապա պետք է կտրել պատվաստելուց 7—8-րդ ուրը, վորպեսզի աչքերը բացվեն բարձր տոկոսով։ Յեթե պատվաստակալի ճյուղերը չեն կտրվում պատվաստելուց 12—15 որ հետո, կաշիլու տոկոսը զգալիորեն պակասում է, իսկ 30—40 որից հետո կաշիլու տոկոսը համարյա հասնում է զերոյի։

Նրա այս փորձերը կիրառելով արտադրության մեջ տվել են լավ արդյունքներ։

Գիտություն գծով ցուցահանդեսին արժանացել են Միություն զանազան գիտահետազոտական հիմնարկներից մի շարք գիտական աշխատողներ, վորոնք ա տաղրությանը տվել են բարձր բերքատու թիֆնուս սորտեր։ Դրանք են՝

1. Շֆանշանկիբ գյուղատնտես ԲԱՎՈՒԼԻՆԸ (Ուզբեկիստան) — արտադրությանը հանձնել է Կոկուսո 70 սորտը, վորը մեկ հեկտարից ոգտագործման 4-րդ տարին տվել է 13 տոննա տերեւ բերք, տեղական «խառակ» սորտի 7 տոննայի դիմաց։

2. Ս. Մ. ՈՍՏՐՈՒՆՈՎԸ (Պյատիգորսկու Շերամ-կայան), վորն արտադրությանը տվել է թիֆնուս № 21 սելեկցիոն սորտը, վորն ոգտագործման յերկրորդ տարին մեկ հեկտարից տվել է 9 տոննա տերեւ, տեղական սորտի 6 տոննայի դիմաց։

3. Պ. Ս. ԱՆԴՐՈՍՈՎԸ (Պյատիգորսկու Շերամ կայան) — արտադրությանը տվել է թիֆնուս № 3 4 սելեկցիոն սորտը, վորն ոգտագործման յերկրորդ տարին մեկ հեկտարից տվել է 10 տոննա տերեւ տեղական սորտի 6 տոննայի դիմաց։

4. Վ. Վ. ՖԱՅՈՒԿ (Ուզբեկիստան) — արտադրությանը տվել է թիֆնուս սելեկցիոն սորտ — Նիզումբալսի, վորը մեկ հեկտար թիֆնուս թիֆնուսից ոգտագործման 4-րդ տարին տվել է 12 տոննա տերեւ, տեղական «խառակ» սորտի 7 տոննայի դիմաց։

5. Ի. Կ. ԱԲԴՈՒԼԱՅԵՎԸ (Ադրբեջանի Շերամ-կայան) — արտադրությանը տվել է մասսայական ընտրության մեթոդով «Զերիֆ-թուլ» թիֆնուս սորտը, վորը մեկ հեկտարից տվել է 7,5 տոննա տերեւ տեղական «Ադգաշ» սորտի 2,5 տոննայի դիմաց։

6. Ա. Ա. ԴԻԴԻՉԵ (Բուխարայի Շերամ-կայան Վրաստան) — արտադրությանը տրել է «Զոլոթա» սորտը, վորը մեկ հեկտար բարձրաբուն թիֆնուսից տվել է 8 տոննա տերեւ, տեղական սորտի 5 տոննայի դիմաց։

8 Ա Ն Կ

1. Նախաբան	3
2. Թիֆագործության լավագույն ստախանովական Վ. Վ. Ֆայուկ 5	
3. Տաշբայ — Շախարուդինով	7
4. Կրասնոդարի մարզի Բուխովիցկի շրջանի Բուխովսու անվան № 2-րդ կոլխոզի բերքատվության բարձրացման ենտու- ղիաստներ	10
5. Գերազանցիկ բրիգադավար — Մանգուզով	13
6. Բուսակների անցման առաջավոր կոլխոզ	14
7. Թիֆագործությունը և շերամապահությունը Կյուսիսում Տ. Ֆ. Բարմին	15
8. Պայքար հեկտարից մեկ միլիոն բուսակ ստանալու համար	22
9. Գիտություն	28

Պատ. խմբագիր՝ Ա. ԲՈՐԻՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ՈՂԱՆՅԱՆ
Խմբագրիչ Գ. ԶՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ

Գլավիտի լիազոր՝ Ա.—3334

Պատվեր № 322 տիրած 1500

Պետհրատի 1-ին տպարան, Յերեան Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0289753

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

19800